

## Արձանագրություն հ. 2

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի  
15.02.18 թ. կայացած նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 անդամներից 27-ը:

### Օրակարգում՝

1. Գիտական զեկուցում <<Բանկային խմբերում ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման մեթոդաբանական հիմնախնդիրները>> /զեկուցող՝ տեխ.գիտ.թեկնածու, դոցենտ Հ. Զաքոյան/:
2. Նոր ընդունված հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
3. Բակալավրիատի կրթական ծրագրերի մասնագրերի և դասընթացների նկարագրիչների հաստատում:
4. Դոցենտի գիտական կոչում ստանալու երաշխավորություն:
5. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցը գիտական զեկուցում էր: Դոցենտ Հ. Զաքոյանը ներկայացրեց բանկային խմբերում առկա ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման մեթոդաբանական հիմնախոսությունները:

Զեկուցման շուրջ ծավալվեց հետաքրքիր գիտական բանավեճ, գիտխորհրդի անդամներ պրոֆեսորներ Հ.Սարգսյանը, Վ.Բոստանջյանը, Ռ.Գևորգյանը, դոցենտ Գ.Հայրապետյանը իրենց մոտեցումներն արտահայտեցին զեկուցման հիմնահարցերի վերաբերյալ:

### **Որոշեցին զեկուցումն ընդունել ի գիտություն:**

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոնների նոր ընդունված հեռակա ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների վերաբերյալ առաջարկություններ:

**Որոշեցին հաստատել ամբիոնների կողմից ներկայացված առաջարկությունները:**

/Ասպիրանտների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման քաղվածքների մի օրինակն ուղարկվում է ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին, իսկ մի օրինակը՝ ֆակուլտետի արձանագրությունների թղթապանակում է պահվում/:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց դեկանի տեղակալ, դոցենտ Կ. Եղոյանը: Նա ասաց, որ բոլոր ամբիոններն արդեն ավարտել են ծրագրերի մասնագրերի և դասընթացների նկարագրիչների հետ կապված աշխատանքները և ներկայացրել են դեկանատ:

**Որոշեցին հաստատել:**

Օրակարգի 4-րդ հարցը վերաբերվում էր դոցենտի գիտական կոչում ստանալու երաշխավորմանը: Դիմել էին տնտեսագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի ասիստենտ Հ.Մարգարյանը և կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ Վ.Գյոզալյանը:

**Որոշեցին երաշխավորել նրանց ստանալու դոցենտի գիտական կոչում:**

Ընթացիկ հարցերի շրջանակում հաստատեցին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հայցորդ Ա. Վերոյանի թեման և գիտական ղեկավարը /հիմք՝ 09.01.18թ.- ին ԵՊՀ ռեկտորին ուղարկված նամակը/:

Գիտլարևիդի նախագահ,  
ու.գ.դ., պրոֆեսոր



Հ.Լ.Սարգսյան

Գիտլարևիդի քարտուղար,  
ու.գ.թ., պրոֆեսոր

Ա. Հ. Համբարձումյան